ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՈՒ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱՐՑԵՐԻՆ

17.11.2018 15:41

ՀՀ փաստաբանների պալատում 2018թ. նոյեմբերի 16-ին, անցկացվել է **«Փաստական տեղեկություններ. իրավունքի գերակայության, մարդու իրավունքների, կոռուպցիայի, արդարադատության մատչելիության մարտահրավերները»** խորագրով հանդիպում-քննարկում, որին մասնակցել են ՀՀ փաստաբանական դպրոցի ունկնդիրներ, դասախոսներ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ:

Քննարկումն իրականացվել է **ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի թմրադեղերի դեմ միջազգային պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի** կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում:

Ծրագիրն իրականացնում է **Միացյալ Թագավորության Նոթինգեմի իրավաբանության դպրոցը**՝ Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի հետ համատեղ:

Քննարկմանը բացման խոսքով հանդես է եկել ՀՀ փաստաբանների պալատ նախագահ Արա Զոհրաբյանը՝ նշելով, որ բարձր է գնահատում Հայաստանում ԱՄՆ դեսպանատան հետ Փաստաբանների պալատի շարունակական համագործակցությունը: «**Այս ծրագրի նպատակն է ստեղծել միասնական ուսումնական և կրթական հարթակ, որտեղ փաստաբանները, այդ թվում՝ հանրային պաշտպանները, ՀՀ փաստաբանական դպրոցի աշխատակիցները և ունկնդիրները հնարավորություն կունենան քննարկելու և համագործակցելու արդարադատության համակարգում մարդու իրավունքների և կոռուպցիայի դեմ պայքարի թեմաների շուրջ**»,- ասել է փաստաբանների պալատի նախագահը:

Ողջույնի խոսքով հանդես է եկել ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանը, որին հաջորդել է հիմնական զեկուցող, Միացյալ Թագավորության Նոթինգեմի իրավաբանության դպրոցի ներկայացուցիչ Պ. Հենդերսոնի զեկույցը:

Քննարկման ընթացքում մասնակիցները բարձրացրել են բազմաթիվ հիմնահարցեր և պայմանավորվել են հետագայում՝ 2019 թվականի մարտ-ապրիլ ամիսների ընթացքում, կոնկրետ դասընթացների շրջանակում անդրադառնալ դրանց:

Հանդիպում-քննարկումը նախապատրաստական գործառույթ ուներ՝ Հայաստանում մարդու իրավունքների և կոռուպցիայի հիմնական խնդիրներին առնչվող փորձառության և տարբեր շահակիցների տեսանկյուններից մարտահրավերների վերաբերյալ:



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })